1837 յունվարի 4. շամախեցի աղա Պետրոսն և այլ. 5. իշխանք գրով խնդրել էին մեզ որ գնանք շամախի Ծննդեանն պատարագ մատուցանենք գնացաք ընդ մեր աբեղին ի տուն Պետրոս աղային, տեսաք քաղաքացոց անմիաբանութիւն և եկեղեցոյ վերայ պաղ հայիին՝ յանձառու չեղայք պատարագ մատուցանելու, թէպէտ շատ խնդրեցին չկամեցաք. մեռելոց օրն որ էր հինկշաբաթի. երիցոխ աղա Յարութիւնն տարաւ իւր տուն չայի և հացի երեգ մանէթ աջահամբոյր տվաւ շէն կէնայ. ուրբաթ օրն Կաճկաճով աղա Յոհանէսն տարաւ իւր տունն չայի և հացի ետ մեզ երեք մանէթ. շէն կէնայ. շաբաթ օրն աղա Յարութիւն Ղազարեանն տարաւ իւր տուն չայի և հացի, երեք մանէթ աջամբուր տվաւ, շէն կենայ։ զարկար յոհանէսն խնդրեաց չայի և հացի, ետ մեզ մէկ մանէթ աջահամբոյր. շէն կենայ. կիրակի օրն աղա Գէորգն տարաւ իւր տունն չայի, զակոսկի, չորս մանէթ աջահամբոյր տվաւ և 10 շահմայի։ սոյն կիրակի օրս կամեցաք գալ վանքս. աղա Պետրոսըս որ եօթն օր իւր օրհնեալ տանն մեզ մեծ պատված Աստուած սորա տունն հայր Աբրահամու տան պէս ծաղկեցուսցէ, դուս գալիս եւս ետ մեզ չորս մանէթ աջահամբոյր. օրհնելով ելաք քաղաքիցն և եկայք ավերակ վանքս։ յունվարի 15ին Սալեանու Նաչալնիկ աղա Ղեւանդն եւս ուղարկել էր մեզ համար 10 շահմայի և մէկ գրվանքայ լանքարանու զալ՝ լաւն, որ ծառի միջիցն դուրս կուգա սնկան նման չէ, այլ փթած ծառիցը է։

Շամախու երիցփոխ աղա յարութիւն. յունվարի 19ին մեզի ուղարկել էր մէկ գլուխ բաքվայ լաւ պանիր շէն կենայ Աստուած պահէ իւր որդիքն. ամէն։

Անղար գիւղի[1]) ուզբաշի աղա Գրիգորն տարաւ իւր օրհնեալ տունն պատիւ. երեք օր պահեց, շէն կենայ։ Փետրվարի 20ին։

Թիֆլիզ աբիցար պարոն Գրիգորն աբիմիլիքն Շատինովն զորաց խազինի տէր. մեզ ուղարկել է ժամուց երկու պաճախլու

---

[1]) Անղար գիւղը այժմ անուանւում է Հինղար և յոմանց Հընղար. ուր 1893 թուի հոկտեմբերին օծեցի նորաշէն սրբատաշ քարով շինած եկեղեցին. ուր և մատղիր էր շինել և տպատվացնել եկեղեցական գպրոցն նոյն տեղացի՝ բազուարնակ տպարանատէր պարոն Սիմէոնն Տէր Յովհաննիսեանց։